

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐԿՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

ք. Երևան

29 դեկտեմբերի 2025թ.

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Գ.Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն (ռեկտոր) Աննա Հովհաննեսի Թադևոսյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 156-Ն որոշման Հավելված N 1-ով հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ձևով պետական ֆինանսավորման կարգը» (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1 Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված 117 078 200 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:
- 1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Միջոցառումներ) ակնկալվող գիտական արդյունքները, Ծրագրի նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կոմիտեն իրավունք ունի՝

- 2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,
- 2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,
- 2.1.3 ջնդրունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,
- 2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝
 - 2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
 - 2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),
 - 2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,
- 2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

- 2.2.1 Կոմիտեի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,
- 2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,
- 2.2.3 Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Կոմիտեն պարտավոր է՝

- 2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,
- 2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

- 2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,
- 2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կոմիտե հանձնել սահմանված ժամկետում,
- 2.4.3 Պայմանագրի նախահաշիվը կազմել առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 22-ի N 2856-Ա/2 հրամանով ձևավորված միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի արձանագրությամբ,
- 2.4.4 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,
- 2.4.5 կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,
- 2.4.6 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու ոչ նպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,
- 2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Կոմիտե ներկայացնել հիմնավորում,
- 2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Կոմիտեի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,
- 2.4.9 Ծրագրի ավարտից հետո Կոմիտե ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին տարեկան (ամփոփիչ) հաշվետվություն,
- 2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կոմիտեի հնարավորությունը,
- 2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,
- 2.4.12 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

3. Պայմանագրի գինը

Պայմանագրի գինը կազմում է 117 078 200 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

- 4.1 Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:
- 4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

- 5.1 Կոմիտեն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև բյուջետային տարվա ավարտը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱՃՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

- 9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:
- 9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:
- 9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կոմիտե

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե

ք. Երևան, Օրբելի եղբայրների 22

Հ/հ՝ 900011033033

ՀՎՀՀ՝ 02704199

ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան

Կազմակերպություն

ՀՀ ԳԱԱ «Գ. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ


Երևան, Նորաջուղ 108

Հ/հ՝ 900018005455

ՀՎՀՀ՝ 01803321

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝


(ստորագրություն)

Կ. Տ.

Կարեն Բորիսի Ղարիբյան

Կազմակերպության տնօրեն (ղեկավար)՝


(ստորագրություն)

Կ. Տ.

Աննա Հովհաննեսի Թադևոսյան

Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

Ստեփան Մայրապետյան


**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ**

Մենք՝ ներքոստորագրյալներս, Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանը և Կազմակերպության տնօրեն (ռեկտոր) Աննա Հովհաննեսի Թադևոսյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 դեկտեմբերի 2025թ. N 1-24/26-IS/IHP պայմանագրի գնի վերաբերյալ՝ 117 078 200 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Կոմիտե

Գլխավոր քարտուղարի պարտականությունները
կատարող՝


Կ. Տ.
(ստորագրություն)

Կարեն Բորիսի Ղարիբյան

Կազմակերպություն

տնօրեն (ռեկտոր)՝


(ստորագրություն) Կ. Տ.

Աննա Հովհաննեսի Թադևոսյան



ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ՄԳԸ-ում (Միջազգային գիտատեղեկատվական շտեմարան) հրապարակում՝	12
Այլ պարբերականում հրապարակում՝	4
Գրքեր, մենագրություններ՝	0
Գիտաժողովի նյութեր՝	10

Կազմակերպության տնօրեն (ոեկտոր)՝


(ստորագրություն)

Աննա Հովհաննեսի Թադևոսյան

Կազմակերպության գիտքարտուղար՝


(ստորագրություն)

Կարապետյան Աստղիկ
Սերյոժայի



Կ. Տ.

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ենթակառուցվածքի պահպանում ու գարգացում» ծրագրի

«Որամ»

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)	107 461 416	21 492 283	26 865 354	26 865 354	32 238 425
2.	տնտեսական ծախսեր՝	4 687 000	937 400	1 171 750	1 171 750	1 406 100
3.	այլ ծախսեր՝	4 929 784	985 956	1 232 446	1 232 446	1 478 936
Ընդամենը՝		117 078 200	23 415 639	29 269 550	29 269 550	35 123 461

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝


 (ստորագրություն)

Աննա Հովհաննեսի Թադևոսյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն)

Հովհաննես Գառնիկի Զորարյան



Կ. Տ.

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

«Ղ դրամ»

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	4 687 000
1.	էլեկտրաէներգիայի ծառայություն	4 000 000
2.	գազի ծառայություն	0
3.	ջրամատակարարման ծառայություն	250 000
4.	կապի ծառայություն	425 000
5.	աղբահանություն	12 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	4 929 784
1.	սարքեր, սարքավորումներ	300 000
2.	գույք	200 000
3.	գործուղումներ	300 000
4.	քիմիական նյութեր, սննդաաղեր	1 300 000
5.	հրատարակման ծախսեր	1 000 000
6.	այլ նյութեր և ապրանքներ	1 200 000
7.	այլ ծախսեր	629 784

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝


 (ստորագրություն)

Աննա Հովհաննեսի Թադևոսյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն)

Հովհաննես Գառնիկի Զորարյան



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Բույսերի անհող մշակույթի ֆիզիոլոգա-կենսաքիմիական ու ագրոքիմիական հիմունքների և հիդրոպոնիկ արտադրության կենսատեխնոլոգիաների մշակումը» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Ծրագրի նպատակն է հիդրոպոնիկ մշակույթ ներմուծել թանկարժեք, հազվագյուտ և մեծ պահանջարկ ունեցող դեղատու, եթերայուղատու, սննդային, տեխնիկական, ծառաթփային և այլ բուսատեսակներ, մշակել դրանց բացօթյա հիդրոպոնիկ աճեցման գիտական հիմունքները, լրամշակել և կատարելագործել արդեն անհող մշակույթ ներմուծված բույսերի աճեցման կենսատեխնոլոգիաները: Բույսերի անհող մշակման տեխնոլոգիաները, որոնք կառաջադրվեն արտադրության մեջ ներդնելու, հնարավորություն կտան բուսական հումքի արտադրության ոլորտ ներառել մեր հանրապետությունում առկա, սովորական երկրագործության համար ոչ պիտանի, տասնյակ հազարավոր հեկտարների հասնող աղուտ-ավկալի, քարքարուտ և ավազուտ հողատարածքները, բաց հանքերը:

Ծրագրի նպատակներից մեկն է նաև բույսերի անհող մշակույթ ներմուծել նոր, տարրաշխարհիկ, ոչ ավանդական բուսատեսակներ /հատկապես՝ սննդային և դեղատու/, ուսումնասիրել դրանց Հայաստանի բնակլիմայական պայմաններին հարմարվելու պոտենցիալ հնարավորությունները, ինչպես նաև հետազոտել դրանց մեր պայմաններում առավելագույն արդյունավետություն ապահովող միջավայրի գործոնների ազդեցությունը բույսերի ֆիզիոլոգա-դեղա-կենսաքիմիական, ռադիոագրոքիմիական ցուցանիշների ու սննդային արժեքի վրա:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

2026 թ. իրականացվելու են նոր և շարունակվելու են նախկինում բույսերի բացօթյա հիդրոպոնիկ մշակույթ ներմուծված (ինտրոդուցված) հազվագյուտ և մեծ պահանջարկ ունեցող մի շարք դեղատու և եթերայուղատու բուսատեսակների հետազոտությունները (դեղատու զոպա - *Hyssopus officinalis* L., գանգուր ավելուկ - *Rumex crispus* L., մայրան խնկածաղիկ - *Origanum majorana* L., սուտերլանդիա թփային /պայթակենի/ - *Sutherlandia frutescens* (L) R.Br., չաման քեմոնային - *Cuminum cyminum* L., սև քիմիոն - *Nigella sativa* L. և այլն)՝ անհող աճեցման ֆիզիոլոգա-դեղա-կենսաքիմիական, ագրո-ռադիոքիմիական հատկությունների ուսումնասիրման, կենսատեխնոլոգիաների գիտական հիմունքների մշակման, որոշների հիդրոպոնիկ աճեցման տեխնոլոգիական փուլերի կատարելագործման նպատակով:

Հետազոտությունները շարունակվելու են ցանովի զաֆրանի - *Crocus sativus* L., յուղատու մորինգայի - *Moringa oleifera* Lam. *in vitro* և հիդրոպոնիկ *ex vitro* համակցված մեթոդով աճեցման կենսատեխնոլոգիաների մշակման ուղղությամբ:

Հիդրոպոնիկ մշակույթ է ներմուծվելու լորենին - *Tilia* L.: Շարունակվելու են հետազոտությունները ծառաթփատեսակների տնկիների /թխկի-*Acer*, կեչի-*Betula*, նոճի-*Cupressus* և այլն/ բացօթյա հիդրոպոնիկ արագացված արտադրության կենսատեխնոլոգիայի մշակման ուղղությամբ: Հիդրոպոնիկ տնկիները կարող են կիրառվել անտառվերականգնման և անտառապատման, անտառածածկի կրկնապատկման, ինչպես նաև քաղաքների կանաչապատման և գեղազարդման, նոր պուրակների հիմնման ոլորտում:

Թանկարժեք, հազվագյուտ, ոչ ավանդական, տարաշխարհիկ դեղատու, եթերայուղատու, սննդային /համեմունքային/ և այլ բույսերի, ինչպես նաև անտառկազմող ու այլ արժեքավոր ծառաթփատեսակների տնկիների հիդրոպոնիկ արտադրության կենսատեխնոլոգիաների մշակումը հնարավորություն կընձեռի ստեղծել բարձրարժեք, որակյալ և էկոլոգիապես մաքուր բուսահումքի, ինչպես նաև մի շարք մշտադալար և այլ ծառաթփատեսակների արմատակալների տեղական արտադրություն: Դրա շնորհիվ մեր հանրապետությունում, կենսաբազմազանության պահպանմանը զուգընթաց, կխթանվի նաև նոր բուսատեսակների ներմուծումը հայաստանյան սպառողական շուկա, բուսական ծագում ունեցող դեղամիջոցների, բուսական հումքով սննդամթերքի և այլ ապրանքների արտադրությունը, կմատակարարվի մեծաքանակ և անհրաժեշտ տեսակային կազմով ծառաթփատեսակների որակյալ տնկիներ՝ նպաստելով նորանոր անտառների ու պուրակների ստեղծմանը, լարված էկոլոգիական վիճակի զգալի թուլացմանը և բարելավմանը:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Ծրագրի գլխավոր նպատակն է հիդրոպոնիկ մշակույթ ներմուծել թանկարժեք, հազվագյուտ և մեծ պահանջարկ ունեցող բուսատեսակներ, մշակել դրանց բացօթյա հիդրոպոնիկ աճեցման գիտական հիմունքները, լրամշակել և կատարելագործել արդեն անհող մշակույթ ներմուծված բույսերի աճեցման կենսատեխնոլոգիաները:

Ծրագրի ենթանպատակներն են.

- Ուսումնասիրել թանկարժեք և վտանգված դեղատու, եթերայուղատու, սննդային և այլ բույսերի անհող աճեցման առանձնահատկությունները՝ նպաստելով դրանց հումքում կենսաբանորեն ակտիվ միացությունների շարունակական բարձրացմանը,
- բույսերի անհող մշակույթ ներմուծել նոր, տարրաշխարհիկ, ոչ ավանդական բուսատեսակներ /հատկապես՝ սննդային և դեղատու/, ուսումնասիրել դրանց Հայաստանի բնակլիմայական պայմաններին հարմարվելու պոտենցիալ հնարավորությունները, ինչպես նաև հետազոտել դրանց մեր պայմաններում

առավելագույն արդյունավետություն ապահովող միջավայրի գործոնների ազդեցությունը բույսերի ֆիզիոլոգա-դեղա-կենսաքիմիական, ռադիոագրոքիմիական ցուցանիշների ու սննդային արժեքի վրա:

- արժեքավոր ծառաթփատեսակների տնկիների արագացված արտադրության տեխնոլոգիայի մշակում անհող պայմաններում: Դրա հիմքում ընկած է անտառների կայուն կառավարման, վերականգնման, նոր քաղաքային պուրակների և կանաչ գոտիների ձևավորման ու արդյունավետ օգտագործման գաղափարը: Մշակված կենսատեխնոլոգիաները կապահովեն որակյալ, ստանդարտին համապատասխան, հզոր արմատային համակարգով, բարձր կաչողականություն ու ավելի ցածր գին ունեցող տնկիների արտադրություն:

Վերը նշված նպատակների իրականացման համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները, որոնք սերտորեն փոխկապակցված են բույսերի անհող աճեցման տեխնոլոգիաների մշակման այս կամ այն փուլի հետ.

- բույսերի անհող աճեցման գիտական տվյալների ձեռք բերում և վերլուծություն
- նոր, թանկարժեք, հազվագյուտ, տարրաշխարհիկ բույսերի Հայաստան ներմուծման /ինտրոդուկցիայի/ և բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում դրանց մանրազնին ուսումնասիրման աշխատանքներ;
- մեծ պահանջարկ ունեցող վայրի ուտելի բույսերի կուլտուրականացում;
- կենսատեխնոլոգիական հետազոտություններ.
 - ❖ միջավայրի տարբեր գործոնների ազդեցությունը բույսերի աճման, զարգացման, բերքի ու բուսահումքի քանակական ու որակական ցուցանիշների վրա (հիդրոպոնիկ լցանյութեր և այլն);
 - ❖ սննդալուծույթի կազմի, խտության և մակրոտարրերի հարաբերության ազդեցությունը բույսերի բերքատվության ու որակական ցուցանիշների վրա;
 - ❖ բույսերի բերքատվության բարձրացման մաթեմատիկական մոդելավորում և այլն;
- Բույսերի ֆիզիոլոգա-կենսաքիմիական և ագրո-ռադիոքիմիական առանձնահատկությունների բնութագրում.
 - ❖ ֆիզիոլոգիական հետազոտություններ /ջրային ռեժիմ, ֆոտոսինթեզող գունանյութերի պարունակություն, ֆլյուրոսցենցիա և այլն/;
 - ❖ կենսաքիմիական ու դեղաքիմիական հետազոտություններ /կենսաբանորեն ակտիվ միացությունների /եթերայուղեր, ֆլավոնոիդներ, ալկալոիդներ, և այլն/ սինթեզի խթանում՝ արմատային սննդառության կարգավորման միջոցով;
 - ❖ ռադիոքիմիական հետազոտություններ /գումարային β-ակտիվություն և այլն/;
 - ❖ ագրոքիմիական հետազոտություններ /կարևոր հանքային տարրերի, ծանր մետաղների պարունակություն և այլն/;

- ❖ սննդային արժեքի բնութագրում /սպիտակուցներ, ճարպեր, ածխաջրեր, թաղանթանյութ, վիտամիններ և այլն/;
- ստացված բուսահումքի կամ դրանցից անջատված առանձին միացությունների հակասնկային, հակաբակտերիալ, հակաօքսիդանտային և այլ հատկությունների ուսումնասիրում;
- դժվար բազմացող ու մեծ պահանջարկ ունեցող արժեքավոր բուսատեսակների *in vitro* և հիդրոպոնիկ համակցված եղանակով աճեցման կենսատեխնոլոգիաների մշակում;
- *in vitro* հավաքածուի պահպանում և հարստացում;
- հիդրոպոնիկ բույսերի բանկի պահպանում և համալրում բացօթյա հիդրոպոնիկական մշակույթում;
- ինստիտուտում գործող մի քանի հիդրոպոնիկական համակարգերի /դասական, ջրաշիթային, կաթիլային, NFT, օրգանական, ուղղաձիգ աերոպոնիկա, ակվապոնիկա և այլն/ ցուցադրական փորձեր;
- ադապտացեն դեղատու բույսերի և գեղազարդ ծառաթփերի առանձնահատկությունների ուսումնասիրում Դիլիջանի անտառային հիդրոպոնիկական փորձակայանի կենսատեխնոլոգիայի պայմաններում;
- բույսերի աճեցման հիդրոպոնիկ կենսատեխնոլոգիայի կիսաարտադրական փորձարկումներ և դրանց արդյունավետության գնահատում (առևտրայնացում);
- տանիքային հիդրոպոնիկայի ցուցադրական մոդելի նախագծում:
Կազմակերպվելու են ճանաչողական այցեր և ուսանողների ու դպրոցականների համար փորձադասերի անցկացում:

Ծրագիրն իրականացվելու է 1 տարում, սակայն գրեթե բոլոր հետազոտությունները հաշվի առնելով բույսերի աճեցման կենսատեխնոլոգիայի բաղկացուցիչ մաս կազմող բազմաթիվ փուլերը՝ բույսի ներմուծում հիդրոպոնիկ մշակույթ, լավագույն լցանյութի, ամենաարդյունավետ սննդալուծույթի կազմի, խտության, մակրո և միկրոտարրերի հարաբերակցության ընտրություն, սնման մակերես, սնուցման ռեժիմ, բերքահավաքի ժամկետ և այլն, ֆիզիոլոգիա-կենսա-դեղաքիմիական, ագրո-ռադիոքիմիական հետազոտություններ, կիսա-արտադրական փորձարկումներ և այլն և դրանց իրականացման համար անհրաժեշտ ժամանակահատվածը /առնվազն 3-4 տարի/, կունենան շարունակական բնույթ:

Հետազոտությունները տարվելու են ինչպես անհող /առկա են. դասական, ջրաշիթային և կաթիլային հիդրոպոնիկական փորձարարական կայան (2200 մ²), ջրաշիթա-թաղանթային հիդրոպոնիկական մոդուլ՝ իր չորս տարատեսակներով, հիդրոպոնիկ վեգետացիոն փորձադաշտ, օրգանական հիդրոպոնիկայի նորակառույց մոդուլ, բազմահարկ, հորիզոնական և ուղղահայաց NFT, ուղղաձիգ և հորիզոնական աերոպոնիկա, խորը ջրային մշակույթի՝ DWC հիդրոպոնիկական համակարգեր, ակվապոնիկա, տարբեր սնման մակերեսներով (0,04; 0,06; 0,09; 0,12; 0,16; 1,0;

2,0 մ²) ավտոմատ սնուցվող վեգետացիոն հիդրոպոնիկ անոթներ, սարքավորումներ և տեղակայանքներ, ջերմոց՝ 12 մ², սենյակային ջերմատան մոդուլ, Դիլիջանի անտառային հիդրոպոնիկ փորձակայան/, այնպես էլ հողային մշակույթի պայմաններում /առկա են մոտ 400 մ² հողային ստուգիչ փորձադաշտ/: Բույսերի հանքային /արմատային/ սննդառության օպիմալացման, արդյունավետության բարձրացման, ֆիզիոլոգա-կենսաքիմիական, դեղաքիմիական և ռադիո-ագրոքիմիական հատկությունների ուսումնասիրման համար առկա են բույսերի սննդառության և արդյունավետության լաբորատորիա, հյուսվածքային մշակույթի լաբորատորիա, ֆիզիոլոգիայի, դեղաքիմիայի և կենսաքիմիայի, ագրոքիմիայի ու ռադիոքիմիայի խմբեր:


Մշակաբույսերի ֆիզիոլոգա-կենսաքիմիական, դեղաքիմիական, ագրո-ռադիոքիմիական վերլուծությունների համար առկա են անհրաժեշտ սարքեր ու սարքավորումներ /ֆիտոտրոնային խցեր, սպեկտրոֆոտոմետրեր, ցենտրիֆուգներ, ռեֆրակտոմետրեր, ջրային բաղնիքներ, ռոտորներ, մագնիսական թափահարիչներ, կոնդուկտոմետրեր, pH-մետրեր, ռադիոմետր, միկրոսկոպներ, դիստիլատոր, չորացնող և ախտահանող պահարաններ, ավտոկլավներ և այլն/:

Կազմակերպության
տնօրենի ժ/պ՝


(ստորագրություն)

(Աննա Թադևոսյան)
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

(Ատեփան Մայրապետյան)
(անուն ազգանուն)

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

«Բույսերի անհող մշակույթի ֆիզիոլոգա-կենսաքիմիական ու ագրոքիմիական հիմունքների և հիդրոպոնիկ արտադրության կենսապեխնոլոգիաների մշակումը»
 ծրագրի

h/h	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
1	1-ին փուլ	գիտական գրականության մշակում, վաշխատանքնային պլանների հաստատումեգետացիայի նախապատրաստման աշխատանքներ, սերմերի ձեռքբերում, տնկանյութի նախապատրաստում և կտրոնավորում, հողվաճների պատրաստում	հիդրոպոնիկ փորձարարական կայանի լաստակների և վեգետացիոն անոթների, սննդալուծույթ մղող խողովակների վերանորոգում, լցանյութերի լրացում, ախտահանում և այլն	01.01.-31.03. 2026թ.
2	2-րդ փուլ	գիտական գրականության մշակում, վեգետացիայի նախապատրաստման աշխատանքներ, սերմերի ձեռքբերում, տնկանյութի նախապատրաստում, կտրոնավորում, վեգետացիայի սկիզբ, բույսերի խնամք, կենսամետրիկ չափումներ, նմուշների վերցնում, հողվաճների պատրաստում	լցանյութերի լվացում և ախտահանում, սննդալուծույթի պատրաստում, սերմերի ցանք, կտրոնների տնկարկ, սննդաաղերի և այլ անհրաժեշտ նյութերի ձեռքբերում, տարբեր սննդալուծույթների պատրաստում, բույսերի սնուցում	01.04-30.06. 2026թ.
3	3-րդ փուլ	գիտական գրականության մշակում, բույսերի խնամք, կենսամետրիկ չափումներ, նմուշների վերցնում ֆիզիոլոգա-կենսաքիմիական և ագրոռադիոքիմիական առանձնահատկությունների ուսումնասիրություն, հողվաճների պատրաստում	բույսերի սնուցում, բերքահա-վաք, տարբեր վերլուծություններ /կենսաքիմիական, դեղաքիմի-ական, ագրո-ռադիոքիմիական, ֆիզիոլոգիական և այլն/, տվյալների մշակում և վերլուծում, հողվաճների հրատարակում	01.07-30.09. 2026թ.
4	4-րդ փուլ	գիտական գրականության մշակում, կենսամետրիկ չափումներ, ֆիզիոլոգա-կենսա-դեղաքիմիական և ագրո-ռադիոքիմիական	Բույսերի սնուցում, բերքահավաք, տարբեր վերլուծություններ /կենսադեղաքիմիական, ագրո-ռադիոքիմիական,	01.10-31.12. 2026թ.


		վերլուծություններ, հողվածների պատրաստում	Ֆիզիոլոգիական և այլն/ տվյալների մշակում և վերլուծում, գիտաժողովների մասնակցություն, տարեկան հաշվետվության կազմում, հողվածների հրատարակում	
--	--	---	--	--

Կազմակերպության
տնօրենի ժ/պ՝


(ստորագրություն)

(Աննա Թադևոսյան)
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

(Ստեփան Մայրապետյան)
(անուն ազգանուն)